

117. **Աղիա Մ. Տառետեան** . — Ծնած է 29 Մարտ 1834 ին Օրբաքոյ՝ ուր ստացած է իր նիւն. կրք.ը ու բաւական սորված եկեղ. երաժշտութիւնը : Հայրը դպրոցին տնտեսն էր . առիկ ծնունդ առած է իր մականունը : — 1848 ին կը մտնէ Արապեանց տպարանը . 4 տարի կը պարապի նոն գրաշարութեամբ : Վերջէն, Բեստաւոցցիի արուեստը Կիւրեմ-պերկինէն գերադաս նամարելով կը նետուի ուսուցչ. առարկեզ, չմոռնալով տպարանապետէն բարեօք պաշտօնավարութեան վկայական մը ստանալ : 1861 ին կը նրատարակէ իր անդրանիկ երկը . «Ծաղկաքաշ կարողիկեաց բուռքերու մեկնութեան» : — Երբ Ազգ. Սանճմանադրութիւնը նաստատուեցաւ , Պոլսահայոց մէջ գոյացան երկու հակամտանքներ . Երկերը կոչուեցան «Սաւարեալ», նորերն ալ «Լուսաւորեալ» . վերջիւ կազմեցին «Անձնուէր Ընկերութիւն»ը , նպատակ ունենալով ուսմամբ յուսաւորել հայ **Վուսեցիները** : Տնտեսեան այդ ընկերութիւնը կազմակերպողներուն [Յ. Մարգարեան , Ա. Խորասանճեան , Գ. Չարդարեան , Յ. Գոլանճեան ևն.]



Ե Ղ Ի Ա Տ Ն Տ Ե Ս Ե Ա Ն

մէջ գտնուելով , 1862 ին սիրալոյսով կը մեկնի Կիլիկիա : Կրթական այդ միամնայ առարքերութիւնը շատ արդիւնատու եղած է : — Պոլիս դարձին , կ'անդամակցի երաժշտ. յանձնաժողովի մը որ պաշտօնն ունէր բարեկարգելու ժամերգութեանց դրութիւնը : Ինք եւրպ. ձայնագրութեան տարածումին կուսակից , 1864 ին լոյս կ'ընծայէ «Բովանդակութիւն նուագաց եղանակաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ըստ ուրն ձայնից» գիրքը՝ եւրպ. խազերով : — Երաժշտագետի իր համբաւը հասած էր մինչեւ Ս. Երկիր , ուրկի 1865 ին նրուէր կ'առանայ և ուր կը մեկնի իրր ուսուցիչ ձայնագրութեան «ժառանգաւորաց»ի : Տարիէ մը Պոլիս գալով , 1867 ին կրկին կ'անցնի Երուսաղէմ նոյն պաշտօնով . այդ առիւ Ս. Յակոբեանց տպարանին վերին հակողութիւնը կը յանձնուի իրեն . նոյն միջոցին է որ կը տպագրէ «Պատմութիւն Ս. Գրոց»ը : Յետոյ կը դառնայ Պոլիս և պահ մը գրավաճառութեամբ կ'զբաղի . այս պարագումը իրան կ'ըլլայ իրեն՝ տպարան մը բանալու : Սու. Տանասեանի հետ կ'աշխատի Միւնենտիսեանի ձուլարանը . վերջէն իրենը հիմնելով՝ կը պատրաստէ բաւականաչափ հայերէն տառեր : 1872 ին կ'աշտոյի ունենալ իր սեպն. տպարանը [Երուստիեան խան ,

քիւ 17. նաեւ Պանդէ Գարու . Լյսառ Էֆենտի խան , քիւ 13] ուրկի լոյս ընծայուած են մասնաւորագէտ Սրուանձտեանցի գործերը՝ որոնց ձեռագիրները կ'ըսուի քէ ինք սրբագրած է : — 1873 ին կը տեսնենք զինք առնենապետ նորակազմ երաժշտ. յանձնաժողովի : Տնտեսեան եւսամնայ տքնութեամբ կը յօրինէ հայկական խազերով **Շարական** մը՝ որ տակաւին անտիպ կը մընայ . իսկ 1874 ին նրապարակ կը հանէ **Նկարագիր երգոցը** որ հայ երաժշտ. արուեստին մասին հմտացից ուսումնասիրութիւն մըն է , ձեռնհասներէ գնահատուած : Եղիսա այլ ևս ձեռքի վրայ է իրը ներմուտ և նեղինակաւոր երաժշտագետ , Կրօն. Ժողովէն ալ վաւերացեալ , 1877 ին կոչուելով Գաւրբոյի և Ղաչարիոյ ժամերուն զգրապետութեան պաշտօնին : Կը նրատարակէ իր մեկ երկն ալ , **Վարժութիւն ձայնաւոր մանկանց** , իսկ 1879 ին **Նուագի հայկականի** պարբերականը , 1880 ին **Նոր երգարան** Հայոց , միաժամանակ վարելով Գեղարուեստից Վարժարանի ձուլարան-տպարանի տնօջական պաշտօնը : Այդ օրերուն է որ ընկերացած է տպագրիչ Արամ Աշճեանի (ԱՐԱՄ ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.) : — Ռուսերուրք պատերազմէն վերջ ,